

ու կալի ու նշան պոռնում նրոնց բաւղադրի Մար-
իոնի ճակատին, սա յայն, ալլահս ասելով, փրո-
վում աւ. սրա հետ շաա զաշաղներ իրանց ստանա-
լուն ստանում են:

Մե գումանից էլ Գոգերգիանց Կալուաւը
հեծնում ա բերթի վալի վրեն, էնդե տրած թոփը
մի բանի անգամ տոաքացնում ա, սաղ քաղաքը
յղրղացնում, զաշաղների սիրար ճաքացնում, լե-
ղաւղաասո ա անում:

Սփոր թուփերի ծենր լսան, զաշաղները ե
ե իրանց աշկի առչերմը ահսան սպանված բայ-
գաղչի Մար-խանին, աշկերը մթնավ, մե բրղամ
ծիերի կլսխները ծոան դիրա Թերքը ե շալղ թափ-

վան ճուրը ու կորան զասիշների մեջ: Մե խոս-
կով, էն աեղը ինգան, որ մե մուկի ծակը հաղար
թումանով կառնին: Կնացին, ոչ պարով ին եկե.
իրանց հետը տարան շատ թալան ե եսիր:

Հալ կնանիքն էլ անմտս շմնացին էտ սարսա-
փելի կոփի մեջ: Ղաշաղները փախնելու վախտը
նրանք տունների կառններից հեփ տված ճուր ին
թափում ավաղակների կլխին, քարեր ին շարտում
ե պատի ճղկերքից աաք-տաք դուլլեթ թավտղա
անում անկոշ զոնտղներին:

Ղաղի-Մուլան սպանվեց ղենքը ձեռքին 1832
թ. Գիմրի աուլի (Դաղսաան) մոտ ոռուսական ղոր-
քերի հետ ունեցած ընդհարման ժամանակ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ, ՊԱՐԵՐԳԵՐ, ԽԱՂԻԿՆԵՐ

ՄԵՐ ԲԱՂՈՒՄԸ

Մեր բաղումը կանաչի,
Հուլքը ճուղքին նման չի,
Հարս-ախշիկ շաա եմ տեսել,
Ոչ մեկը յարիս նման չի:
Ախ, անուշ, ջան անուշ,
Իմ սիրական Հայկանուշ:

Այ բաղմանչի, բաղմանչի,
Բաղս բաղիդ նման չի,
Քաղաքում աղերք շաա կան,
Մեկը մեկին նման չի:
Ախ, անուշ ...

Սխչի, անըմդ Շուշան,
Շոր ես հաքել շիշխան,
Խելքս տարար, ջան Շուշան,
Օսկի մատնիս քեզ նշան:
Ախ, անուշ ...

Ունքերդ կամար-կամար,
Էկամ Ղղար քեզ համար,
Կաշխաաեմ օսկի քամար,
Քու պարակ մեկքի համար:
Ախ, անուշ ...

Մե բարձ ունեմ նտխած տ,
Ցարս վրեն քեւած ա.
Նրա աշկունքին մեռնեմ,
Մե քիշ ռսնղը թոած ա:
Ախ, անուշ ...

Դարիվեր ճուր ա ղնում,
Հարցրեք՝ ո՞ւր ա ղնում,

Քենուն մահտնա արած,
Սիրածի տուն ա գնում:
Ախ, անուշ ...

Դու նստել ես դոշագին,
Ուշկ ու միաքդ փեշագին,
Խմել ես կարմիր դինին,
Հոտ ես քաշում մեխակին:
Ախ, անուշ ...

Սանղո, նստել ես կարի,
Այ տխալուդ մի կարի,
Ռամանին տարան Սիրիբ,
Պեաք ա սպասես աաս տարի:
Ախ, անուշ ...

Այ տխալուդ կարել եմ,
Այ կոճակն էլ շարել եմ,
Տանում են աանեն ջան պիճին,
Նրանից լավին ճարել եմ:
Ախ, անուշ ...

Մեր բոսաանչի վարթանը
Ցանավ իրա բոստանը,
Շատ շոք արավ ամառը,
Չորացավ սաղ բոստանը:
Ախ, անուշ ...

Սիրականր լավ պան ա,
Ոչ շաքար ա, ոչ տառն ա,
Թե որ աաամին կպավ,
Դիմանալու հեշ պան ա:
Ախ, անուշ ...

Մեր բաղումը Թորոսը,

Ծեն էր տալիս խորողը,
Պոչը տափին քսելով,
Պար էր գալիս Հորոսար
Ախ, անուշ ...

Մեր թամադեն հոքի ա,
Օքնականը լոթի ա,
էրկուսով մեկ պարում են,
Դափ ու զուռնեն զոռում են,
Ախ, անուշ ...

Ախշիկեքի մոդա ա,
Տուֆլիքը սուր կրունկով
Սիրուն սազով աղա ա,
Տեխնիչեսկի ֆուրածկով,
Ախ, անուշ ...

Հոռոմ տոտեն շատ շաղ էր,
Երկու աթոռք կնասեր.
Պտպիրողը պերանին
Անկայնելի կխոսեր
Ախ, անուշ ...

Ես մի շահել շոֆեր եմ,
«Սուտրեկերի» վրեն եմ,
Եփոր յարիս անսնում եմ,
Տորմուղ տալով կայնում եմ,
Ախ, անուշ ...

Մեր բախշումը կանաչի,
Ճուղքը ճուղքին նման չի,
Թորուն-թորուն գալիս են,
Ոչ մեկը յարիս նման չի,
Ախ, անուշ, ջան անուշ,
Իմ սիրեկան Հայկանուշ,
Այս երգի խոսքերը ճաղողեղել են Աճճա և
Մովսես Մովսիսյանները:

ԵՂՍՈՅԻ ԵՐԳԸ

Եղսոն նստել՝ բուրդ կըգզի,
Ազունակի հետ կխոսի
Հո-ո-ո-ո-ո 2 անգամ
Եղսո ջան

Եղսոն արագ ման ա գալիս,
Գոգնոցները ժած ա գալիս
Հո-ո-ո-ո-ո ...

Եղսոն ընկավ մեր գուքանը,
Կանֆետները՝ իր գրպանը
Հո-ո-ո-ո-ո ...

Եղսոն գտավ սիրականին՝
Բեղը սրած ծուռ Սիմոնին,
Հո-ո-ո-ո-ո ...

«Սա ա, որ կա իմ սիրածը,
Մեզ վկա ա ինքն աստվածքս:
Հո-ո-ո-ո-ո ...

Սիմոնը կասի. «Եղսոս լավն ա,
Առանց խոստում գուռ չի բանառ:
Հո-ո-ո-ո-ո ...

Եղսոն սաղափ դոտիկ կուղի,
Քոթուկ ոտին մաշիկ կուղի:
Հո-ո-ո-ո-ո ...

Աիմոնը կասի. «Կտամ,— կասի,—
Ինչ որ յարիս սիրտը կուղիս:
Հո-ո-ո-ո-ո ...

ՆԻԿՈՂՈՍԻ ԵՐԳԸ

Անցյալ գարի վերջում Ղլարում ապրում էր
աշուղ Քոռ Նիկողոսը, որը նվագում էր թաու նրա
հորինած երգերից մեզ հասել է այս միակ երգը:

Վառա, վառա, ես վառա,
Կրակըս ճրագ առա,
Հանգստութուն շունեցա,
Մինչև փափագս չառա:
Վառա, վառա, ես վառա,
Ամբողջ Ղլար ես վառա,
Ղլարում հազ ասելով
Մի մեծ բախափ տեղ դառա:

Վառոյիս որ ես տեսա,
Ուշքից, մտքից զրկվեցա,
Վառա, վառա, ես վառա,
Ախ, իմ փափագս առա:

ՔԵՖԻ ԵՐԳ

Թե սիրում ես թամաշա,
Պիտի լինես քաղքումը.
Ինչ են անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը:

Մալապատիկ ծառի աակ
Մեր լոթիքն են նստոտել,
Չաթվարներն ու դավաթներ
Իրանց առչե են գրել:

Մին մինի կենաց իմում,
Մենակոց ու կենդանաց,
Մին մինի բողաղ խրում
Շամփորնեկով խորոված:

Քաջալ գլուխ գունաշին
Հոռալո ա հա փշում,
Իսկ դառլի դմփոցը
Մարդու ալանջ ա տանում:

Աչքը ճակտին ա թռել
Մեր տառվելի Ղլաբցու,
Լեզուն դառադին կպել
Պակ չի գալի դինուցը:
Դմփացնում են դահիրա
Իրանց փափուկ մասներով,
Պար են գալիս լեղդինկա
Աղունակի ոտներով:

էս են անում համաշա
Մարդիկ իրանց բախումը,
Թե սիրում ես թամաշա,
Պիտի լինես բաղքումը:

Ա Լ Յ Ա Յ Լ Ո Ւ Ղ Ը
(Ներգով պար)
Աղջիկ

Յայուղս կարալ ձեր ղուոր,
Սրտես դուքս չի դա մոմուոր.
Բախտն ինձ ղցեց էս հուրը,
Սիրուն աղա, տուր յայուղս:

Տղա

Քո յայուղը ինձ մոտ չկա,
Նրդրվում եմ, հոգիս վրկա.
Ով դտել է, թող բերի տա,
Սիրուն աղջիկ, քու յայուղը:

Աղջիկ

Յայուղս յարիս բաշխածն էր,
Օսկի թելերով նախշած էր.
Պատկերս վրբեն քաշած էր,
Սիրուն աղա, տուր յայուղս:

Տղա

Ջահիլ-ջիվան սարերն ընկա,
Ցավոտ սրախ ճար չի դաա.
Քու սերն ինձի հոգի կրտա,
Թող ինձ մնա ալ յայուղդ:

Աղջիկ

Ախ, ի՞նչ ասեմ ես իմ մորս,
Կտմ ի՞նչ պատմեմ ալիզ հորս,

Խաբար կրտան մեծ եղբորս (2) յարո չտն,
Սիրուն աղա, տուր յայուղս:

Տղա

Սեուկ աղջիկ, սպիտակ հագի,
Առ յայուղդ, վերքս կապի,
Սիրուդ դերի, ինձ մի ասնջի,
Էրված աղջիկ, առ յայուղդ:

Ո Ր Ս Ի Ե Ր Գ

Առավոտ է, դնանք անտառ,
Հաղրենք մեր թուր ու թվանդ,
Որսանք բաղբու, փասյան կայառո,
Տապկենք, ուտենք, կըշտանանք:

ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳ

Դե, քեփ արա, հարսի ջան, հա՛, հա՛, հա՛,
էսոր ալու է կոճան, հա՛, հա՛, հա՛,
Մամոն լինի քեզ քավոր, հա՛, հա՛, հա՛,
Ամենքս՝ հարսանքավոր, հա՛, հա՛, հա՛,
էս իրիկուն անպատճառ, հա՛, հա՛, հա՛,
Պետք է մորթենք մեկ ոչխար, հա՛, հա՛, հա՛,
Ուշում անենք ղոռումա, հա՛, հա՛, հա՛,
Սիտոր, մածուն անխնա, հա՛, հա՛, հա՛:

«Որսի երգը» և «Հարսանիքի երգը» հա-
ղորդել է Գևորգ Յիրույնիկյանը:

ԿԱՆԱՆՑ ՍՈՒԳ

Դու որ դնում ես,
Ինձի ումի արովն ես թողնում,
Այ աղիղս. (այրին իր ամուսնուն թաղելիս),

*
* *

Քու բոյ բուստթին մեռնեմ,
Քու լիքը յայուղին մեռնեմ:
Ինձ էլ հեադ տար, Գրիգոր ջան:

Լ Ա Ր Ի Թ Մ Բ Լ Ա

Օ՛, ինչ քաղցր պան,
Իլել կոնծապան,
Կոնծել միշա դինի,
Թափառել միշա անպան:
Լարի թմրլա, լա՛, հա՛, հա՛, հա՛:

Օ՛, ինչ տառեր պան,
Իլիլ թղթապան,
Տարվել միշտ փողը,
Կլիխն տալ սե հողը:
Լարի թմրլա ...

Անպոչ նապաստակ,
Պոչով ավանակ,
Իվան Նիկիտին՝
Աշխարհի փրկիչ:
Լարի թմրլա ...

ԵՐԳ ՎԵՐԳԻՆԻԿԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Ախ, իմ բալես,
Ազիզ բալես,
Ջան բալես,
Հեր թողեցիր,
Մեզի տխուր,
Ջան բալես:
Աիրտներին մեջ
Վերք թողեցիր,
Ջան բալես:
Ո՛ւր զնացիր
Մեզնից հեռու,
Ջան բալես:

Քեզ հիշելով
Մեր վերդինիկ,
Ջան բալես,
Չենք մոռանա,
Մեր նազ ազջիկ,
Ջան բալես:

Ախ իմ բալես,
Ազիզ բալես,
Ջան բալես,
Չենք ունենա
Քեզ պես ազջիկ,
Ջան բալես:

Այս երգը հորինել է Աթանես Ալեքսանյանը
իր վստեք մանկան տոթիվ, 1889 թ.:

ՈՂՐ ԼԵՎՈՆ ՔԱՆԱՆՅԱՆՑԻՆ

Տխուր համրավդ որ հասավ, ցնցվեցավ Ղզլար,
Քանանյանց.

Անրախա ժողովուրդը սրտով արտմեցավ իսպառ,
Քանանյանց.

Զօր ու գիշեր քեզ ցավով են հիշել, ով աշխարհ,
Քանանյանց.

Դեմքով թշնամին ուրախ էր, բայց հոգով տկար,
Քանանյանց.

(Այս ողբի հորինողը հայտնի չէ):

ՂԶԼԱՐԻ ԵՐԳԸ

Վերի կողմը Դազստանն է, բարձր սարեր ունի,
Ղզլար,
Երկու հարյուր տարվա քաղաք, անցած դարեր
ունես, Ղզլար,
Զորս օրյորդից պատրաստված ես, այդպես անցքի
ունես, Ղզլար,
Այգիներդ օդուտ կտան, բազում հոտեր ունես,
Ղզլար:

Երբ կփոխվի, զարուն կդա, կրողքոջեն ծաղիկներդ,
Վարդապատակ այգիներում քաղցր կերդեն մուգիկ-
ներդ,
Հարս ու ազջիկ ձեռք կրերին վարդ ու շուշան,
մեխակներդ,
Եղեմական դրախտի պես կարմիր խնձոր ունես,
Ղզլար:

Հողդ անուշ, ջուրդ անուշ, քեզ ուրիշ բան պետք
չի, Ղզլար,
Մեջիդ եղող դարիներն էլ չեն ուզում ես վերա-
դառնալ,
Ծոխ սեղաններդ անենելով՝ միշտ են ուզում
ուրախանալ,
Ամառվա սաստիկ շողերին թանձր հովեր ունես,
Ղզլար:

Լեռնական, թե նոգայները բազում կգուն մշակ-
ներդ,
Բաց կանեն քո այգիներդ, կբազմանան
խաղողներդ,
Ամեն տարի մենենիկով՝ կհիշենք ձեր նախնիներին,
Ջան ասելով, ջան կլսեք, քաղցր օրեր ունես,
Ղզլար:

(Որքը հորինված է XIX դ. սկզբին, հեղինակն
անհայտ է: Երգի խոսքերը հաղորդեց Սոնա Կա-
րապետյանը):

¹ Տոնախմբություն, անվանախոշորություն:

ՂԱՂԱՐԻ ՀԻՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր Ղզլարը առաջ գնաց,
Ամեն բուշում պիվնոյ ա պագ,
Աշխատանքի տուող բթան,
Գինիի տեղ պիվա խման:
էս մեր բաղի մեշտեղումը,
Մե մենն փանառ կա որ կախված,
Մութ դիշերը սևուր անելուց,
Տեսնում ենք շաա վախտը հանգած:
Մեր մենն բուշեն ցարսկի գառավ,
Ցեխից գուրս գալ տժվարացավ:
Արարիքը բաթմըշում են,
Հանոգները խեղդվում են:
Մեր բաղերին ղոռավ տարավ,
Աղի արտասուքը լացացրավ,
Նրա տեղը հինգ գուլյանին
Ղզլարցիքին գրագեցրավ:
Մեր ցավերի թունգությունից
Մենք ես տարի մուպիկ պերանք,
Նրա վարձը լրացնելով,
Մե գուլյանին ավել սարքանք:
Մեր ծախսերը լավ ա գնում,
Գինին ծախում, վերսիլ առնում,
Լեղուներս հանտծ պտուտում,
Մանգրացնելու տեղ չենք քթնում:
Ժամանակը վերսիլների
Տաւր սոխից ա թամամվում,
Գնում ենք փող ըստանալու,
Փողի աղը երգ ենք լսում:
Հորինել է Մատթեոս Նալբանդյանը,
Ղզլար, 1910 թ.:

ՂԱՂԱՐԻ ՔԵՓԵՐԸ

Ղզլարի քեփերը
Տեսնելու պան են,
Ղզլար եկողները
Շատ գոհական են:
Ախր, ո՞վ չի սիրի
Ղզլարի գինին,
Կամ ո՞վ չի հավանի
Չաղլիկ կուրկուրին:
Իսկ ղըյմով փլավը,
Ցափրաղի ղոլմեն,
Սե-սե խավիարը,
Եղոտ շամայեն:
Կամ գոմիշի սերը,
Նաղուկ, փախլավեն,

Օ՛, իրա նմանը,
Հավաաք շունեն:
Հարիսեն խոմ ճոկ պան ա,
Անմահական ա.
Սըրա հեա սե գինին
Հափ սազական ա:
Թամաղեն գովում ա
Շաշ պաարաստողին,
Նրա կենաց թասերը
Ջնգուս լազաթին:
Եմիշն ու հավողը
Շատ քաղցրահամ են,
Ղզլարից էլ ղուար
Լավ ընթունված են:
Օխնըվի էն հողը,
Քաղցր հավողը,
Օխնվեն ծեռքերը՝
Բերք ստեղծողները:
Ղզլարի քեփերը
Տեսնելու պան են,
Ղզլարի հյուրերը
Շատ գոհական են:
Թող հայի սեղտեր
Միշտ ուրախ իլի,
Թող Ղզլարի գինին
Մեղ անուշ իլի:

Հորինել է Ս. Մկրտումյանը:

ՈՐՔԱՆ ՈՒՋԵՑԻ

Որքան ուղեցի մի ալ վարդ քաղել,
Որ բուրմունքի հետ փշեր շունենար,
Որքան ցանկացա սրտսնց ծիծաղել,
Որ ծիծաղիս մեջ վիշտը չխաղար....
Որքան ուղեցի մի երգ հորինել,
Որ կրծքես ուրախ ու ղվարթ թռչեր,
Որքան ցանկացա մի կույսի սիրել,
Որ իր կրծքի տակ օձեր չպահեր:
Վարդն առանց փշի ինձ չը պատահեց,
Որքան մոտեցա, ձեռներս ծակեց,
Ծիծաղից հետո միշտ գառը լացի,
Ծիծաղն առանց վիշտ երեք չղղացի...
Երգս մրմուռի հեծեծտնք գառավ
Ու այրված սրտես այնպես ղուրս թռավ,
Կույսն էլ ինձ սիրեց, հետո ուրացավ...
Երբ ինձնից հարուստ փեսա ունեցավ...
Այս երգի խոսքի հորինողն է Արաաշես Ղա-
րիբջանը: Ոտանավորը առաջին անգամ տպագրու-

վել է «Մեմուս» գրքույկում 1904 թ., Ս. Պետեր-
բուրգ:

Շ Ո Ւ Շ Ի Կ, Ա Ղ Զ Ի Կ

Շուշիկ, աղջիկ,
Քեզի ասի՝
«Սիրտս նվեր եմ աալիս,
Սերբս, երգբս
Տխուր, մոմուս,
Գանձս քեզ եմ ես աալիս»:

Նուշ ծոցրդ բաց,
Մուշ ծոցրդ բաց,
Յար շան, ինձ ներս ընդունիր,
Սև աչքբս լաց,
Սե սիրարս բաց,
Յար ջան, ինձ ներս ընդունիր:

Սեուկ, մեուկ,
Անժայր, խավար,
Աչերրդ ինձ վառեցին,
Քնքուշ, անուշ,
Մաաաղ, խաղաղ,
Կյանքս սեռվ պաաեցին:

Օ՛, անդուժ յար,
Օ՛, անսիրա յար,
Ղարիբ, օաար մաշվեցի,
էդ աչքերիդ,
Նուշ պաչերիդ
Մարավ, պապակ հալվեցի...

Յար սիրեցի,
Կյանք ասացի,
Յարբս երես դարձրեցի
Աչքբ սե էր,
Սիրար մութն էր,
Հարուսա աղին սեր ալեց ...

էն օրվանից,
Սե օրվանից,
Ղարիբ ընկած քուն չունեմ:
Ոչ մի սրառամ,
Ոչ մի դրկում,
Սիրոդ ծոցում բուն չունեմ:

Օաար հողում,
Ղարիբ աեղում,
Յոթ աարի ալ հաղնեմ,
Սիրաս սե է,

Վշտի ծով է,
Թեկուղ վարդի մեջ աղբեմ:

Այս երգի խոսքի հորինողն է Արմ. Ղարիբ-
յանը: Տպագրված է «Մեմուս» գրքույկում, 1904
թ.: Եղանակը հաղորդեց բժիշկ Սոս Բաղդասար-
յանը:

Ջ Ա Ն Դ Յ Ո Ւ Լ Ո Ւ Մ Ն Ե Ր (Խաղիկներ)

Մառիս աակր մանիշակ,
Շան դյուլում, ջան, ջան,
Քեզ կանեմ յարիս շիշակ,
Շան ծաղիկ, ջան, ջան:

Ամպել ա, ձյուն չի գալի, ջան դյուլում...
Աչկերիս քուն չի գալի, ջան ծաղիկ...

Անձրե էկավ շաղալով, ջան...
Կանաչ խոար դողալով, ջան...
Հրեն յարս դալիս ա, ջան...
Ալ ձին տակր խաղալով, ջան...

Խնձոր ունեմ կծած ա, ջան...
Չորս կողմր էրծաթած ա, ջան...
Ախպերս ուղավ, չտվի, ջան...
Ասի՝ յարիս ղրկածն ա, ջան...

Հիցուն օր պաս եմ պահե, ջան դյուլում...
Իմ սիրած յարի համար, ջան ծաղիկ...

Ախչի, մաղերդ հուսի, ջան...
Թուշդ էրեսիս քսի, ջան...
Թուշդ ուուր ինձ, մե պաչեմ, ջան...
Աստված քու մորր պահի, ջան...

Աարի խոտր ծեղնե-ծեղ, ջան...
Եղրայր երթանք միատեղ, ջան...
Որ հարամին վրա տա, ջան...
Գրլուխս աամ դիխիդ տեղ, ջան...

Այ տղա՝ բաղի մեչին, ջան...
Ոաերդ՝ շաղամեչին, ջան...
Ինձանից քեզ ճար չիկա, ջան...
Ես եմ քու հաղի մեչին, ջան...

Մառի տակր հով քամի, ջան...
Յայլուդս քամին աանի, ջան...
Կլոխս ծոցդ դնեմ, ջան...
Անուշ քունս կտանի, ջան...

Պագր աւեր տուն ունեմ, ջան...
Իմ դուշմանին սախտ կանեմ, ջան...

Իմ լարը խոռով դնաց, ջան...
Էն պագր սարով դնաց, ջան...
Ես ծիտ դառաւ, նա՛ կաբավ, ջան...
Էն սարով թուով դնաց, ջան...

Ճաղացս պանի, պանի, ջան...
Դարդից բունտ չի տանի, ջան...

Քո պես մորը ինչ ասեմ, ջան...
Որ ինձ մարթու չի տալի, ջան...

Ախպերս ծառի տակին, ջան...
Սաղմոսը կոան տակին, ջան...
Սաղմոսը դիր ա դառե, ջան դյուլում, ջան, ջան...
Լեզուն ըլրուլ ա դառե, ջան ծաղիկ, ջան ջան:

«Ջանգլուումներէ» խոսքերը հագորդել և
դպրագրերու և Մովսէս Մովսիսյանները:

ԽԱՂԱՅԻՆ, ԿԱՏԱԿԵՐԳԵՐ, ՀԱՆԳԱՎՈՐ ԱՍՈՒՅԹՆԵՐ

Ասա՛ վեց-վեց, ջանդ ինզնի ցեց:
Ասա՛ օխաւ-օխաւ, ինզնեա ջան կողքի:
Ասա՛ ութը-ութը, քրքրեա ուղաի պուրթը:
Ասա՛ տասը-տասը, առնաա մուլի հարսը:

Մեկ, էրկու, իրեք, ;
Համեցեք, կերեք,
Ութը, ինը, տասը,
Թթու թանի սպասը:

Ուրբաթ, շաբաթ, դերադի,
Մամեն ինձի կթադի:

Այ Օվանես, Օվանես,
Չափառի աակ ճուսեր հանես:
Ես կոխընեմ, դու հավաքես,
Էս ի՞նչ մարթ ես, Օվանես:

Ջան, ջան դերադի,
Վայ էրկուշաթի,
Մամա ջան, մամա,
Փոքս կցավի,
Շկուլա չեմ դնա:

Տմրըլ, ամրըլ հարսանիք,
Դիփ դնացին, ես մնացիմ:
(ասում են ունեքը թմրելուց):

Չուլաի-չուլաի, չուլ քցի,
Փոխանը հանի, դեն քցի,
Եփոր մարթու տուն կդա,
Առչեմ սուփը քցի:

Լղար-մղար մոնթ Յուլբաշը
Կես քիշերին կերավ խաշը,
Նստած քնավ մինչե ճաշը:

Յուրա ա, ցուրա ա, մրսում եմ,
Ծոցս հաց կա, ուտում եմ,

Ախչիկ կտաք, կպաշեմ,
Չեք տա, ջան պես կհաշեմ:

Ճարը-ճրաք երեխես,
Ամալ դարման էրեխես,
Դարդ մոռացնող էրեխես,
Դարդի հինգեր էրեխես:

Էրեխես չիլի, ինչ կիլի,
Մամի անդաճը դինչ կիլի:

Մտիկ արա, հա՛,
Աչկերա կհանեմ,
Տեղըմը կորեկ կցանեմ:

Դան, դան, դանոցը,
Մեղրով լիքը քթոցը,
Սե օչխարի ամակը,
Մութը ասնը ճրադը:
Հայդա, փախնենք, նորահարա:

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլվլում եմ,
Ադունակ եմ, կլվլում եմ,
Հսր մորթած եմ, մոր կերած եմ,
Ադիդ քվոր լաց իլած եմ: Թը՛ռռ...

(Երեխաները շուրջ բռնած, ձեռքերը իրար
վրա դարսելով ու ձեռքի կաշին քաշելով, ասում
են վերի քառյակը: «Թը՛ռռ»... բացականչության
վրա ձեռքերը բարձրացնում են):

ՇԱՏԱԽՈՍԻ ՄԱՍԻՆ

Ով շատ խոսի, ըլրըլի,
Օչիլ ուաի կոճրաալի,
Շան պոչ ուաի,
Ախպրից ճուր խմի:
Լեզուին աչառ քցենք,
Բալանիքը դեն քցենք: